

կալ եմքնէն, որ իմտարակոյսս լուծեցիր, որ շտո ժամանակէ ի վեր թէ չաց և թէ Յօն՝ ամեն աստիճանի անձանց շտո անդամ հարցուցած եմ, և չեն կարողացած բացատրել ինձ։ Այսկայն ասկէ ի զատ ուրիշ հարկուոր հարցմունքներ եւս ունիմ առաջարկելիք, եւ կ'աղալեմոր հրամայես գաս իմտունս և հօն իոս սինք։ Եւ ոյն ժամանակ յայտնեց իրեն Անատոլուի Պաղի ապէրի եւ ֆէնսին ըլլալը, և թէ իւր ամարանոցը Պաղամթաշը ըսուած տեղնէ, և ձմերուան տունը Պօլս Առլթան Պայազիսի մզկթին քովլը։ Պ. Ա'արդար երբ լուց բարձրաստիճան անձ ըլլալը, և չգիտնալով թէ անոր ընելիք հարցմունքները ինչ առարկայի վերաց պիտի ըլլան, և այն ժամանակին պարագայներն ալ քիչ շտո երկիւղ ազդելով իւր սրտին, յանձն չտուաւ երթալ, և ոչ էֆէնտին կրցաւ զինքը ստիպէլ, գիտնալով որ Կեղամեանը Եւրոպայի գեսապանաց հովանաւորութեան ներքեւ կը գտնուէր։

Օսքարիսյի որդւոյն կենացը վերայ կատարեալ տեղեկութիւն չունիմք, մինչեւ ի 1819 կենդանի կը գտնեմք զինքը։ Ա ասն զի սոյն թուականին միջոցները Աւետարանի երկու տեսուկ թարգմանութիւն ըրած ըլլալը, բնադիրները խրկած էր ի Պօլս առ Պօլս Արքալան Պատրիարքն Անդրիանուալուցի, որ ընտրութիւն ընէ երկու տեսակ թարգմանութեանց մէջ։ և նա արժանաւոր համարած էր զայն որ տպուեցաւ ի Բեդերս պուրկ նցյն թուականին, ինչպէս ըսած եմք վերը։

Կեղամեանի կենսագրութիւնը թէեւ անկատար պատմուած ըլլայ հոս, մեր նպատակը անոր գրադիտութեան մասին ունեցած իւր հըմ-

տութիւններն են։ փափաքելի էր մեզ, որ իրեն նմանող բազմաթիւ գրադէտներ ունենայինք, որ իւր գիտութեանը և իմացական արժանաւորութեանը հետ լծորդած ունէր նաև առաքինութիւնն ի սիրտն և բարեպաշտութիւնն ի հոգին։

ՊԱՏՄԱԿԱՆ

Որորագրութիւն ու շնորհաւութեան Տ. Գրեգորի Շնորհակիր Պատրիարքի Ա. Անդրեյ յահովանշէմէ ի կ. Պօլս։

Աշխարհիս վերայ թէ քաղաքականութեան, թէ կրօնաւորութեան և թէ գիտութեան զանազան ճիւղերու մէջ երեւելի եւ մեծանուն հանդիսացող անձանց թէ վարուցը և թէ կհնաց վերաբերեալ որ եւ է փոքրիկ կամ աննշան պատմական պարագայ մի լոելու ըլլայ մարդս, հետաքրքրութեամբ կը կարդայ և մտիկ կ'ընէ։ մանաւանդ եթէ այն պատմական անձը ազդային մէկը եղած ըլլայ։ Վեր ազդն ալ ունեցեր է ուրիշներուն նման հանրածանօթ անհամաներ, թէ քաղաքականութեան և թէ կրօնական գձուձ հանդերձներու մէջ փայլող ժամանակի դիւցազուններ, որոնք պահ մի իրենց ժամանակակից ժողովրդին աչքը դէպ իւրենց վերայ դարձնելով, զանոնք զարմացուցեր, և մատուամբ ցուցընելով՝ Դա է, զրուցել տուած են։ Ասոնց մէկն էր ութեւտասներորդ դարու Հայոց գիւցազրունը, Ազգին բարերարը և Երուսաղէմի Ա. Աթոռուոյս հաստատութեան սիւնը, Գրիգոր Պատրիարք Շնորհակիր։ Ասոր վարը և գործքերուն մեծ մասը դըրեթէ ազդին ծանօթ ըլլալով, դիւ-

տաւորութիւն չունիմք ամբողջական պատմութիւնը հսու ընել, որ Երուսաղէմի ժամանակադրական պատմութիւնը հեղինակսղին յատուկ պահեալ պաշտօնն է : Իսոյց որովհետեւ պատմութիւն մի որբան ընդարձակ ըլլոյ, կարելի չէ գարձեալ որ իւրաքանչեւր դէպքի ամենամանր պարագայներու ալիջնէ, առանց անսր ուժը թուլցընելու, վասն որոյ համարելով՝ թէ սյն մանրամասն պարագայքը դուրս պիտի մնայ օրինաւոր պատմութեան մէջն, արժան համարեցինք մեր Ա.Յակոբայ Վ.Թոռոյն դիւցազնագործ հայրապետին դողդոջուն ձեռաց ինքնագիր ստորագրութիւնը հսու մէջ բերել, զոր գրած է 1736 ին յիշուսադէմէ դէպ ի արքոյանիստ մայրաքաղաքը ճանապարհորդած ժամանակը :

Ուղեւորութեան պատճառն է Ա.Յակոբայ վանքին սեփականութեան խնդիրը, զոր Յշնք կրկին անդամ սաք ենելով կը ջանային յափշտակել: Յունաց Երուսաղէմի Պատրիարքը Վելեդիս արդէն Պօլիս իջնելով, եւ զօրաւոր կուսակցութիւն մի հոգալով իրեն, սկսեր եր իւր նպատակը յաջողցընել և մինչեւ անդամ գաղտ հրովարտակ մի հանելտալ, մէջը նշոնակել տալով Ա.Յակոբայ վանքը և ուրիշ հեկեղեցիները: Տեսնելով ազգին երեւելի ամիրաները և սարքաֆները, որ գործը երթալով մեծ կարեւորութիւն և ծանրութիւն կը ստանայ, եւ Հայոց սեփականութեանցը մեծ վտանգ կը սպառնայ. եւ որովհետեւ իրենց քով ամբողջ չէր գտնուէր բոլոր հարկաւոր հրովարտակներն ու սենեները, և լիակատար տեղեկութիւն ալ չունէին ի սկզբանէ ի վեր յուղուած սյն խընդիոյն, ուսամի խորհրդակակցելով՝ հրա-

կրակ կը խրկեն յիշուսաղէմզնա կոր եպիսկոպոսը՝ Նալեան, որպէս զիթէ զՎրիգոր Պատրիարքը և թէ Ո. Վ.թոռոյն մէջ գտնուած հրովարտակներուն իսկական օրինակները և թէ ծախուց համար հարկաւոր զրամը հետն առնու գայ ի կ. Պօլիս:

Եւասիկ սոյն ուղեւորութեան սոորագրութիւնը, զոր իւր ձեռագրին վերայ հսու կը հրատարակեմք. պահելով իւր լեզուն՝ հանդերձ յատկութեամբը: Վտորագրութեան մէջ եղած պատմական կտորներն են նշանակութեան արժանաւորները, որոնք մեզ ալ գրգիռ եղած են ամբողջ իւրուղեգրութիւնը հրատարակելու:

Ակամօքն Վ.ստուծոյ ի թուին ՌՃՁԵ (1736) ամին, ի մայիսի վեց օրն, զինի սրբոյ Պատեքին, ի հինգշաբթի աւուրբյետ սրբոյ պատարագի մատուցման ելոք ի սրբոյ քաղաքէն Երուսաղեմայ և յաստուածագիր Վ.թոռոյն սրբոյն Յակոբայ, յորդ արտասուօք և դառնակսկիծ ողբովք բաժանելովի սրբոց եղբարց միաբանից, և ընդ ուխտաւոր մահտեսեաց: Յեօմն ժամուն Եկեալ հասաք ի Ա.էմէ, և քանի մի գլուխաւոր մահտեսեօք ի վանքն մէր ի սուրբ Վէորդ իջեւանեցաք, զուն երեւման սուրբ խաչն անդ կատարելով, և զայլ ամենայն ուխտաւորսն անդ պատճեն պիղծ մուսէլլիմն բռնութէ յաւերակ խան տարեալ իջոյց, եւ երեք գիշեր անդ արդելեաց վասն լոփարին: Եւ իբրեւ ելին ուխտաւորքն ի խանէն եւ ի վանքն առ մեզ եկին, եղեւ խոռվածթիւն և աղմաւէ յոյժ, զմեզ բամբասելով թէ ընդէր այսպէս եղեւ:

Ա. ի կիրակէի յետ սրբոյ պատարագին ի Ա.է.մէու ելոք և յերեք ժամն Վ.ստուծով եկաք յիշափա ի

սուրբ Ամենայօս Հայրապետի՝ վանքն
մեր. և եօթն օր անդ կացաք՝ պատ-
ռասիրեալք ի բազմաց : Եւ ի մայիսի
ժե յաւուր շաբաթի՝ յետ սրբոյ պա-
տարագի յլափայոյ ելաք, և ընդ ա-
ռաւուն մտաք ի շանթուռ(1), եւ եկաք
յինկիզու ըսկոն սակաւ ուխտա-
ւորօք, որ և ինաւի վարձէն երկու
հազար զուրուշ վիճակ կրեցաք, պատ-
ճառ անմիտբանութիւն ազգին մե-
րոյ : Եւ յերրորդ ժամուն շաբաթու
Ելան բացեալ Աստուծով ի հինգ օրն
յաջողակ հողմով եկեալ հասաք հան-
գեպ Տուզլա կոչեցեալ նաւահան-
գըտի (Ափառոսի) . և յորդ անձրեւ
եկն յայն օրն, և նաւապետն երկաթ
ձգեաց հանդէպ Տուզլայի ի չորեք-
շաբթի օրն ի չորրորդ ժամու ցերե-
կին . և մնացաք անդ մինչեւ յուրբաթ
աւուր երեկոյին : Եւ ակնցի Ոինաս
վորդապետն ընծայիւք եկեալ ինաւն
տեսաք զմիմեանս . և յերրորդ պա-
հու գիշերոյն Ելան արարեալ ընդ ա-
ռաւուն հասաք հանդէպ | իմինսու
նաւահանգստին . և վասն իմ մեղաց
ընդդէմ հարեալ հողմն անյաջող տան-
չեաց զմեզ այնքան, մինչ զի ի ժե օրն
և կէս ի Տուզլայու հազիւ հասաք ի
Ֆինիքէ կոչեցեալ նաւահանգիստն ի
յունիսի հինգ, և ջուրն ևս պակասե-
ցաւ ըմպելս . և յայն օրն ի յինանց
յետին չորեքշտթին յեօթն ժամու
ցերեկին ֆանունայ եղեւ, և յերեկո-
յին գաղրեցաւ : Իսկ ի նը Համբարձ-
ման Տեառն մերոյ եղեւ սաստիկ ֆը-
նունայ ի վեց ժամու ցերեկին, մինչ
զի գրեթէ ի կենաց յուսահատեցաք,
և լալիւն և կոծ մեծ եղեւ ի մէջ ա-
մենեցունցա, և յերեկարեցաւ մինչեւ
ի խոր երեկոյին . և ապա սակաւ ինչ
գաղրեցաւ ծովին մինչեւ ի չորրորդ

պահու գիշերոյն . և կրկին սկսաւ
ծովին, մինչեւ ընդ առաւուն և հան-
գարտեցաւ : Եւ յուրբաթու ցերե-
կի հինգ ժամուն կրկին սկսաւ ֆը-
նունայն, բայց շուտով հանդարտե-
ցաւ . բայց մեք ամենեքին ուշա-
թափեալ ի վայր անկեալ կայաք ի
սաստիկ ալէկոծմանէ և ի ծարաւոյ :
Եւ ի շաբաթու ընդ առաւուն աճա-
պարեալ նաւապետն ստիպելով մին-
չեւ ի հինգ ժամն հազիւ թէ զնաւն
եմոյծ ի Ֆինիքէու լինան . և մեք ելաք
ի ցամաքն, և կրկին սկսաւ ֆանու-
նայն . բայց փառք և գոհութի յարու-
ցելոյն և վերացելոյն յերկինս Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ պահ-
եաց զնաւն և զմեզ զամենեսին, եւ
վեսա ումեք ոչ եղեւ բարեխօսու-
թեամբ սրբոց իւրոց . վասն որոյ օրհա-
նեալ է անունն Տեառն Աստուծոյ
մերոյ . ամէն :

“ Բայց զՃշմարիտն գրելի է, զի
յօրէ յօրմէ ելաք ի սուրբ Երուսա-
լեմայ մինչեւ ցայժմ՝ վասն իմ ծո-
վացեալ մեղաց անյաջողութիւնն ըզ-
մեզ պատեալ է, զոր Տէրն ամենայ-
նի զինքն ի բարին կատարեսցէ : Եւ
զի յայնժամ ծովին ոչ հանդարտեցաւ,
վասն որոյ և բազումք յուխտաւորաց
ելին ի նաւէն ցամաքաւ գնալ . եւ
մեք եւս ելաք գնալ ընդ նոսա, ի
մեծահրաշ կիրակէի յերեկոյին ի Ֆի-
նիքէու յաւերակ բերդն օթեցաք,
և յերկուշաբթի անտի ելաք եկաք ի
գիւղն Հալած զմի ժամ, և իջաք անդ
ի մէջ բարձրաբերձ ծառոց, յորս եւ-
զանակէին պի-լալ-լ և այլ թռչունք,
և մերձ երեկոյին ելաք անտի և օթե-
ցաք ի լեառն մի խոտաւէտ : Եւ յե-
րեքշտթի օրն անտի ելաք, զջրհորսն
անցանելով և առ եղերբն փաքք ծո-
վակին ընթանալով օթեցաք ի տեղի
մի տափարակ, և չորեքշտթի առաւ-

(1) Հանդուռ. Կըսուն Պաղեստինի ծովելիքը.
Ները բանող նաւակները:

ւօտուն մտաք յԱլմալու ջրաւէտ քազաքն՝ լի մրգաբեր ծառօք և բուրաստանօք . բայց բնակիչքն այլազդիք և ապերասանիք . Այլ օրհնեալ արեւելեան վաճառականքն իջուցին զմեզ ի խանն հիւրամեծարութեամբ , և ողօրմութիւն եւս ետուն մեզ : Եւ անդ այր ոմն արեւելցի ի գիւղէն Արաշինկու , մահտեսի Ո՛կրտիչ անուն , տեսեալ զլազութիւնս մեր՝ ետ՝ յիսուն զուրուշի ձի մի և չորս ոսկի ողօրմութիւն և թօշակ Ճանապարհի . ողօրմեսցի նմա Տէր : Եւ անտի ելեալ օթեցաք առ ջրազաց մի . և անտի անցեալ զԱյտանօղ Եայլան և զԱնտիա դաշտն՝ և օթեցաք ի մէջ արտօրէից ի ներբց բարձր ընկուզեաց : Եւ անտի ելեալ անցաք զբազում անտառօք , եկաք ի տեղի մի խոտաւէտ , անդ օթեցաք ի տօնի սրբոյ Հոգեցն Աստուծոյ գալստեան գիշերին . և ի կիրակէի ընդ առաւօտն ելեալ անտի եկաք ի Պուրտուր մեծ զասապայն . և անդ եղեալ արեւելեան օրհնեալ վաճառականքն , որոց գլխաւորն նոցաէր Արաշինկու քաղցրաբարոյ պարոն Անառնէն , որք սիրով զմեզ ընկալան . և ի Ոստարմայոյ եւս եկին վասն մեր տէր Աստուածատուրն , պարոն Ո՛կրտիչն , և այլք ընդ նոսա , և պատուեցին և ողօրմութիւն եւս ետուն մեզ . տէր Աստուած տացէ նոցա զլարձս բարեաց :

“ Եւ յերեքշաբթի անտի ելեալ , երեկօթս արարեալ եկաք ի Բուռնզարպաշի կոչեցեալ աղբիւրն յորդահոս . և յայնմ գիշերի ըմբռնեաց զիս դողն և ջերմն , և այնպէս կիսակեն դան ելաք անտի , և այլ ոչ կարացի զիջեւանսն գրել , զի ի տուէ և ի գիշերի տագնապ ցաւոյն նեղէր և տառապեցուցանէր յոյժ : Եւ այնպէս դառն ցաւօք եկեալ հասաք Աստու

ծոյ օրհնեալ մայրաքաղաքն Պօթահիա , և անդ անկայ ի մահիճս ի նը Աստուածածնի եկեղեցւոյ խցնակն , և այլ ոչ կարացի ընդ ուխտաւորացն գնալ . և քսան և մէկ օր անդ ի մահիճս մնացի յափն մահու հասեալ : Բայց զայն քաղաքի օրհնեալ քահանայից և զմողովրդոց , զարանց և զկանանց , զծերոց և զտղայոց զսէրն և զմեծարանս ոչ կարեմ ընդ գրով արկանել , զի ընկալան զմեզ իբրեւ զհայր , եւ պատուեցին որպէս զհրեշտակ Աստուծոյ , թէպէտ եմ մեղաւոր . եւ զլիսաւոր նոցա էր բարեպաշտ մահտեսի իւսուֆ ֆինճանճին . լիցին օրհնեալ և վարձատրեալ Աստուծոյ ամենեքեան . ամէն :

“ Եւ ի Բիւզանդիա մեծ Պատրիարք Յովհաննէս աստուածաբան վարդապետն լրւեալ զլազութեամբ գալն մեր անդ , իսկոյն առաքեաց ընդ առաջ զսորեսին զգլիսաւոր վարդապետսն զՅարութիւն , զՅակոբ , զԱյահակ և զպալատցի Յակոբ աստուածաբան պետսն հանդերձ այլովք : Եւ մէք Աստուծով սակաւ ոգի առեալ , նոքօք հանդերձ ելաք յօրհնեալ քաղաքէն յայնմանէ , բազում շնորհակալութեամբ և անշափ օրհնելով զնոսա : Եւ զի երկու քահանայք եւ օրհնեալ մահտեսի իւսուֆն և մը նշանաւոր արք մինչեւ ի Պուրսա եկին ընդ մեզ . բայց յելանելն մեր անտի ցաւն խստացաւ ի վերայ իմ , այլ ողորմութեամբն Աստուծոյ անցեալ մեր զանհուն լեառն Տամալիճ կոչեցեալն՝ անձրեւով , և ի Ճառահդիւղն Հայոց օթեցաք : Եւ անտի ելեալ ի մօտելն մեր Պուրսայու , եկին ընդ առաջ մեր վաղեմի սիրելին իմ՝ քաղաքի առաջնորդ Աերսէս աստուածաբան վարդապետն քահանայք եւք և իշխանօք , հինդ ժամու Ճանա-

պարհաւ, և յայնմ գիշերի օթեցաք
իներքոյ արքակաղին ծառոց, և ընդ
առաւօտն եկեալ մատք ի Պուրսայու
սուրբ Աստուածածնի եկեղեցին բազ-
մաւ մեծարանօք : Եւ յետ երից ա-
ռուրց ելեալ տեղւոյ իշխանօք եկաք
ի Զէքիրկէ կոչեցեալ չերմուկան .
անդ մնալով զգիշերն, և անտի ել-
եալ եկաք ի Առւտանիա . մաեալ ի
նաւակ մի՝ Աստուծով խաղաղութք
հասաք ի Կոստանդնուպոլիս, յշնկի
Դափու կոչեցեալ նաւահանգիստն ի
յուլիսի քսաներեք, ի վեց ժամն ա-
ռուրն :

Եւ յելանեն մեր ի նաւէն՝ նախ
տեսաք զփիրելին մեր զկեսարացի քէ-
րէստէմի մահանեսի Պարրիէն : Եւ
տպա եկն ցանկալին հիքոյ՝ Պատրի-
արք մեծ վարդապետն, եւ ի տեսա-
նեն զմիմեանս խնդացաք յցժ և գո-
հացաք զԱստուծոյ . և յետ ողջա-
գուրելց զմիմեանս՝ եկաք ի սուրբ
Աստուածածնի բազմամարդ եկեղե-
ցին, և տեսաք զբարեկամս մեր ըզ-
քահանայս զիշխանս և զամենայն ժո-
ղավարդոն, և կրկին գոհացաք զԱս-
տուծոյ . և ի նորաշէն սուրբ եկեղե-
ցիսն ուխտ արարաք, զոր տէր Աս-
տուծ հաստատուն պահեսցէ, զի են
մեծասպայծառք, հիանալիք, և զար-
մանալիք :

Եւ տպա անցեալ զծովն եկաք
յիւսկուտար ի վանքն մեր . և նրա-
տեալ տստ՝ սպասեմք սզբութեանն
Աստուծոյ, զի յաջողեսցէ զգործս մեր
ի բարին : Եւ անդ Աստուծով շինել
տուրաք զմեծ օդայն հանդերձ ներքին
օդային՝ յցժ գեղեցիկ և ծովահայեաց :
Եւ ի նոյեմբերի մաւան եկաք ի Պո-
ւատու սուրբ Հրեշտակապետաց ե-
կեղեցին, զսուրբ տօն նոցա անդ
կատարելով, և սիրով զմեզ ընկալան :
Եւ ի նոյն ամսոյ քսան և մէկ եկաք ի սր-

Աստուածածնի եկեղեցին . Եւ յելն
նոյեմբերի գնացաք ի սուրբ Պէոր-
գոյ եկեղեցին՝ զտօն սուրբ Օննդնդ-
եանն և զՅայտնութեան տեառն մե-
րց Աստուծոյ անդ կատարեցաք : Եւ
խորհրդեամք բարեկամաց սկսաք նը-
ւիրակութիւն խնդրել ի նոցանէ .
բայց չեղեւ, զի սակաւք ոմանք զո-
ղումութին ինչ ետուն . բայց հետա-
եալքն ի մէնջ . . . ազթարմայք զմեզ
մատնեցին Ֆրանսայու Ելչի պէկին
ասելով զուր, թէ Երտասազեմայ
Հայոց Պատրիարքն զձեր պատարագն
հոյհոյեաց ի մէջ քարոզին : Իսկ նա
անարդանօք զնոսա յետս գարձուց-
եալ էր՝ ասելով, թէ ոչ հաւատամ
թէ այրն այն զայնպիսի իրս խօսի (1) :
Եւ յունվարի իդ մեծարեաց Ելչի
պէկին զՊատրիարքն, զմեզ, և զմահ-
տեսի իշխանսն մեր ի պատիւ . և գը-
նացեալ անդ յցժ պատուեաց զմեզ,
և երկօնունց օմիտ եւս պարգեւ-
եաց . շէն մնայ : Եւ անտի ի սուրբ
Աստուածածնի եկեղեցին եկաք . եւ
ի փետրվարի ը եկաք ի սուրբ Պէոր-
գոյ եկեղեցին . և Աստուծով ի մէջ
պալային լաւ ամարան նստելց տեղմի-
տուաք շինել . չերեսուիչ գինն և ըզ-
շինողչեքն մեք տուաք և զկաշառսն :

Իսկ ի մեծ բարեկենդանին յօրն
հինգշաբթի ի սրբոց Խոկեանց աօնին
ի դժման ցերեկին յանկարծակի սարւ
սուռ իմն զողոյ եկն ի վերայ իմ, և
անհնարին ցաւ ըմբռնեաց զիս, եւ
տառապեցոց մինչեւ ի մահ . մինչ զիս
և բժշկացն յոյսն հատեալ ի բաց եւ-

(1) Գաղղինացոց գետպանին՝ այն է Անդեմի
մարգիզը . Գրիգոր Պատրիարքին վայոք որբան մէծ
համարում ունենալը, կը վերցէ Մեքայէլ վարդապէտ
Չամենան իւր սրամնամեռնան գ. հատորի 811 Լ.
բայր . և թէ ինչ մէծ ընդունելութիւն ցըցուց ա-
նոր մայրագաղաքը հասած ժամանակ իւր ազգէն եր-
կու կրօնուար իւրկելով և անոր ողջամբ գարուսոր շը-
տորհաւորելով, զըր և Վզանսի քաղցր կը իանչէ :

զեն յինէն . այլ տէրն ամենայնի ողոք-
մեցաւ և առողջացոյց : Եւ յառաջ
նում կիրակէի մեծ պահոց գնացի ի
սուրբ եկեղեցին զմաշու գիրքն դող-
դոջալով ընթերցոյ , և յետ սրբոյ
պատարագին եկի ի յարկին թէ հան-
գըստիցիմ . ի նոյն ժամն լուսոյ զող-
մուկն , որ լեռալ էր ի մէջ Պատրիարք
վարդապետին և սուրբ Խջմիածնի նը-
ւիրակ անթափցի Քութառուր Պետրոս
վարդապետին . վասն ոչինչ իրի : Ոչ
կարացի համբերել , այլ ի նոյն կիրա-
կէի ելեալ եկի ի սուրբ Աստուածու-
ծնի եկեղեցին . և թէպէտ առ երեսս
եղեւ խաղաղութիւն ի մէջ նոցա .
բայց վեասն եղեւ միջնորդիս՝ որ դը-
րամ խարջեցի՝ յիմ խելոց գին : Եւ
մնացաք անդ զսուրբ Պատեքն անդու-
նօր կատարելով . որ և յերկրորդում
շաբաթու սուրբ Օատիին ի հինգ-
շաբթի օրն գնացաք յիւսկուտար ի
վանքն մեր , և զսուրբ Համբարձումն
անդ տօնեցաք . և զինի հինգ աւուրց
եկոք ի Վաղաթիոյ սուրբ Առւաւոր-
չի եկեղեցին , և զսուրբ տօն Հոգ-
ւոյն Աստուծոյ գալուտեան անդ տօ-
նեցաք . մեղուորս ժամարար (եղէ) :
Եւ վասն շնութեան սրբոյ եկեղեց-
ւոյն մնացեալ էր պարտք շահով քը-
սան հազար զուրուշ , և որ ինչ կէլլ
գայր եկեղեցւոյն՝ ի պարտուց շահն
տային . վասն որոյ աղաշեցաք զօրհ-
նեալ սարրաֆ իշխանսն մեր եւ զոյլ
ժողովուրդն , որք փոխ դրամ եւ
տուն , որ շահն վերացաւ . Աստու-
ծով եւ ի պարտուցն եւս կ'ազա-
տուի : Տէրն ամենայնի պատճառ լի-
նողացն և օգնողացն վարձս բազումն
տացէ . ամէն :

Ի յաջորդն :

Ժ. ԱՄՄԱՆԱԿԵԳՐԱԿԱՆ Ք

Յուլիս 13 ին հասաւ ի սուրբ քա-
ղաքո Դամասկոսի գաւառի ընդհա-
նուր կուսակալ Վահամափայլ Ոիւ-
շւեր Ուսխլիս փաշայն : Հետեւեալ
օրը Ամենապատիւ Արքաղան Հայրը
գնաց ի տեսութիւն Երիխն Վահամու-
թեան , որ բարեհաճեցաւ նոյն օրը
երեկոյեան գէմ փոխ — այցելութիւն
ընելու Արքաղան Պատրիարքին : Եցն
օրը գարձեալ Հեռագրալութիւն ընկա-
լու Երիխն վսեմութիւնը , որուն կի-
մացընէր ընդհանուր կուսակալութե
պաշտօնէն գաղարումը : Վահամափայլ
կուսակալը հինգ աւուրց չափ հարկա-
ւոր տեղուանքը պատըսելէն եւ ըստ
իւրեանց ծիսի ու խորի յատկացեալ
մկիթաները այցելութիւն ընելէն յե-
տոյ՝ ամսոյն 20 ին մեկնեցաւ :

— Կիրակի օր (24 յուլիս) քսան
տարեկան խուլ և խառնածին պատա-
նի միքաղաքիս բնակիչներէն , քուրձ մի
ցորեան բեռցընել ու զելովմերկ իշու-
վերայ՝ ըստ սովորութեան տեղւոյս ,
և մինակ չկարենալով , ֆէլլոհ գե-
ղացի մի անկէ անցած ժամանակ նը-
շնացի կը կանչէ զինքը որ իւրեն օգ-
նէ : Ֆէլլոհը զանց ընելով կ'անցնի
կ'երթոյ , խուլ պատանին դանակ մի
ձեռքը ետեւէն կ'երթոյ ու ծամելի-
քին ետեւի կողմէն շեշտակի հար-
ուած մի կու տայ . դանակը կը մնայ
մէջը ու ինքը աներեւոյթ կ'ըլլոյ :
Խեղճ ֆէլլոհը հոգւոյն կոկիծէն դա-
նակը կը քաշէ կը հանէ , ու կ'իյնի կը
մարի , և կը վերցընեն կը տանին զին-
քը կառավարչին պալատը : Ապանողը
թէպէտեւ աներեւութեացած է , բայց
յօս կայ զինքը գտնելու :

— Կիպրոսէն կը գրեն թէ մայիս
ամսոյ 20 էն սկսեալ շարունակ 21 օր
անդադար անձրեւներ գալով , ահա-